361
P-64

wp - 2397

Մ. 152 361 Թ-64
1 MAR 2010
508/15/11

ՀԱՇԻՒ

ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1908 Թ.

ՔՍԱՆՈՒԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ 7
1909

42.776

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-ական.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ц. им. А. Мясникяна
40626-63

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի, որ կայացաւ 1908 թ. ապրիլի 23-ին.

Ժողովը բացուեց 39 անդամների ներկայութեամբ։ Նախագահ ընտրուեց տ. Կատարինէ Լիսիցեանը։ Քարտուղար—տ. Նունէ Տէր-Աւետիքեան։ Ժողովի սկզբում կարդացուեց 1907 թ. ընդհանուր ժողովի արձանագրութիւնը։ Իսկ յետոյ տ. Ե. Յարութիւնեանը կարդաց Վարչութեան գործունէութեան մասին, որտեղ շօշափւում էր նոր կանոնադրութիւնը հաստատել տալու հարցը։ Ժողովականներից մէկը հետաքրքրուեց իմանալ, թէ ինչումն է կայանում հին և նոր կանոնադրութեան զանազանութիւնը։ Տ. Յարութիւնեանը բացատրեց, որ տարբերութիւնը գլխաւորապէս անուան և նպատակի մէջ է. փոխանակ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն կոչուելու, պէտք է անուանուի Կովկասեան Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, ուրեմն և իրաւունք կունենայ գաւառական քաղաքներում ճիւղեր բանալ. իսկ նպատակի հետ ծանօթացնելու համար կարդաց նոր կանոնադրութեան նախագծի այն կէտը, որտեղ որոշուած է Ընկերութեան նպատակը։ Ժողովականներից ոմանք առարկեցին, թէ Ընկերութիւնը գաւառական ճիւղեր բանալով, բաւականին բարդ և դժուարին գործ է ստեղծում իրեն համար։ Բայց ժողովականները չընդունելով այդ առարկութիւնը, աւելորդ համարեցին այդ հարցի մասին խօսել, քանի որ անցեալ տարուայ ընդհանուր ժողովում քննութեան է ենթարկուել և ընդունուել նոր կանոնադրութեան նախագիծը։

Ընդհանուր ժողովը լիազօրութիւն տուեց Վարչութեան անդամներին կանոնադրութեան նախագիծը ներկայացնելու պատշաճաւոր իշխանութեանը։ (Այս լիազօրութեան բնագիրը կցուած է սոյն արձանագրութեանը)։

Այնուհետև կարդացուեց Ընկերութեան 1907 թ. ելեմտից հաշիւը, որը և ընդհանուր ժողովի կողմից հաստատուեց։

Կար ու ձևի արհեստանոցի կառավարչուհին կարդաց արհեստանոցի հաշիւը։ Կարդացուեց և Վերաստուգիչ Յանձնաժողովի զեկուցագիրը։ Վարչութեան գանձապահ տ. Միլեանը կարդաց 1908 թ. համար կազմուած նախահաշիւը։ Տ. Յարութիւնեանը բացատրեց, որ նախահաշիւը նախընթաց տարիների հետ համեմատած կազմուած է աւելի մեծ գումարի, որովհետև առաջիկայ սեպտեմբերից որոշուած է արհեստանոցի բոլոր բաժանմունքներում, բացի հինգերորդ բաժանմունքից, օրական երկու ժամ յատկացնել առարկաների, որպէս զի այդպիսով հնարաւորութիւն տրուի, արհեստանոց մտնող աշակերտուհիների գիտութեան խղճուկ պաշարը կարելոյն չափ լրացնելու։

Ընդհանուր ժողովը առանց փոփոխութեան ենթարկելու հաստատեց 1908 թ. նախահաշիւը։ Այս բոլորից յետոյ ժողովը անցաւ հերթական հարցերին, այն է ուսումնարանի բնակարանը փոխելու և սեպհական շէնք ձեռք բերելու մասին։ Վարչութիւնը յայտնեց, որ Իւանովայի տունը, որը գտնւում է Бебутовская փող. արդէն նայել է, որը բաւականին յարմարութիւններ ունի և առաջարկեց ժողովին քննել, արդեօք տեղը յարմար է, թէ ոչ։ Եթէ տեղը յարմար է, ծանօթանայ և պայմանների հետ, և իսկոյն որոշուեց ընտրել մի Յանձնաժողով հինգ հոգուց բաղկացած, որը Վարչութեան հետ միասին նայէ թէ Իւանովայի տունը և թէ այլ տներ և եթէ յարմար տուն գտնի, մանրամասն տեղեկութիւններ հաւաքէ և զեկուցանէ հետևեալ ընդհանուր ժողովին։

Մասնաժողովի անդամներ ընտրուեցին տ. տ. Միրիմանեան, Աւթանդիլեան, Մ. Յովհաննիսեան, Քիշմիշեան և Անանեան։

Ապա ժողովը անցաւ ընտրութեան։

Վարչութեան նոր անդամներ ընտրուեցին հետևեալ անձինք

տ. Հ. Մարտիրոսեան 30 ձայնով
տ. Շ. Յովհաննիսեան 27 ձայնով
տ. Մ. Ղարաջեան 25 ձայնով

Փոխ-անդամներ.

տ. Վահրամեան 25 ձայնով

տ. Մ. Յովհաննիսեան 24 ձայնով
օր. Ռոտինեան 17 ձայնով
տ. Ս. Քալանթարեան 15 ձայնով

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ

տ. Հ. Աւթանդիլեան 29 ձայնով
տ. Ս. Բարխուդարեան 29 ձայնով
տ. Ն. Աւետեան 29 ձայնով

Վերաստուգիչ Յանձնաժողովի փոխ-անդամներ

տ. Կուսիկեան 14 ձայնով
տ. Վ. Սպարապետեան 11 ձայնով

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի, որ կայացաւ 1908 թ. ապրիլի 23-ին.

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը, խորհրդակցելով ընկերութեան կանոնադրութեան մի քանի անհրաժեշտ փոփոխութիւնների մասին, համապատասխան ընկերութեան նպատակների և իրականութեան պահանջների, միաձայն որոշեց հետևեալը. լիազօրութիւն տալ Ընկերութեան Վարչութեան հետևեալ անդամներին. Հայկանոյշ Գրիգորեան Մարտիրոսեանին, Նունէ Պետրոսեան Ղամբարեանին, Մարգարիտ Սարգսեան Ծուրինեանին, Շուշանիկ Միքայէլեան Յովհաննիսեանին, Վառվառէ Սարգսեան Միլեանին, Մարիամ Դաւթեան Ղարաջեանին, Հեղինէ Բաղդասարեանց Առստամեանին, Մարիամ Միքայէլեան Լիսիցեանին, Երանուհի Ստեփանեան Յարութիւնեանին, իրանց հայեցողութեամբ փոփոխել Ընկերութեան կանոնադրութեան որոշ կէտերը և յետոյ փոփոխուած կանոնադրութիւնը առաջարկել ի հաստատութիւն պատշաճաւոր իշխանութեան, ընդունուած օրինական կարգով, որի համար Վարչութեանը իրաւունք է տրւում կատարել ամեն տեսակ օրինական գործողութիւններ և ձևականութիւններ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովի, որ կայացաւ 1908 թ. Մայիսի 11-ին։

Ժողովին ներկայ էին ընդամէնը քսան հոգի, այդ պատճառով հարց բարձրացաւ՝ թէ արդեօք ժողովը կարելի է օրինական համարել թէ ոչ, բայց ձայների մեծամասնութեամբ վճռուեց կայացած համարել, քանի որ այս ժողովը իսկապէս շարունակութիւն է նախընթաց ընդհանուր ժողովի, ուրեմն և այդպէս ժողովը բացուած համարուեց։

Ժողովի նախագահ ընտրուեց միաձայն տ. Միրիմանեան։

Քարտուղարը կարդաց ապրիլի 23-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը և առանց առարկութեան ընդունուեց։

Սրանից յետոյ ժողովի նախագահ տիկին Միրիմանեանը կարդաց իւր մանրամասն հաշիւը, որը կազմել էր մի քանի տների վերաբերեալ, թէ վարձելու և թէ գնելու։ Վարչութիւնը պարտք համարեց յայտնել իւր խորին շնորհակալութիւնը տիկին Միրիմանեանին, նրա կրած անչափ նեղութեան համար։ Տիկին Ղամբարեանը առաջարկեց մասնաժողովի անդամներին նայել և Երիցեանի տունը, որը գտնուում է Անչիսխատսկի փողոցում, թէ որքան յարմար կըգտնի ուսումնարան կառուցանելու համար։ Մասնաժողովի անդամ տ. Միրիմանեանը յայտնեց, որ հակառակ իւր ցանկութեան չի կարող շարունակել իւր ստանձնած պաշտօնը, որովհետև գնալու է ամարանոց։ Այս հանգամանքը ի նկատի առնելով ժողովը, բարւօք համարեց հրաւիրել երկու նոր անդամների ևս, այն է՝ օր. Կ. Ղուլիջանեան և տ. Կ. Լիսիցեան։

Այնուհետև ընդհանուր ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ լիազօրութիւն տրուի Վարչութեանը, որ Մասնաժողովի անդամների հետ միասին նորից նայէ աւելի յարմար բնակարաններ, թէ վարձելու և թէ իբրև սեպհականութիւն ձեռք բերելու համար, միայն կանխիկ գումար վճարելով ոչ աւելի քան 15 հազար ռուբլի։

Նախագահ՝ Մ. Միրիմանեան

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան 1908 թուի գործունէութիւնը

1908 թ. Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը իւր գործունէութիւնը մի փոքր ընդարձակեց թէ մի նոր արհեստի ձեռնարկելով և թէ կար ու ձևի արհեստանոցը մասամբ փոփոխութեան ենթարկելով։ Նախ մի քանի տեղեկութիւններ կար ու ձևի արհեստանոցի մասին։ Վարչութեան նոյն թուի սեպտեմբերից արհեստանոցի դասընթացի մէջ արհեստին վերաբերող մի քանի անհրաժեշտ առարկաներ մտցրեց։ Վաղուց արդէն այդ պակասը զգացւում էր արհեստանոցում։ Վարչութիւնը նկատում էր, որ արհեստը առանց իւր օժանդակիչ առարկաների չի կարող զարգացման այն աստիճանին հասնել, ինչ աստիճանի՝ որ իսկապէս պէտք է հասնի։

Չնայելով, որ այդ բարեփոխութիւնը շաղկապուած էր մեծ դժուարութիւնների հետ նիւթական տեսակէտից, այնուամենայնիւ Վարչութիւնը ձեռնարկեց վերոյիշեալ փոփոխութեանը, յոյս ունենալով, որ ընկերութեան անդամները կըհասնեն օգնութեան և վարչութեան հետ ձեռք ձեռքի տուած կաշխատեն լրացնել այդ նիւթական պակասը։

1907-8 ուս. տարում կար ու ձևի արհեստանոցում սովորում էին 128 աշակերտուհի, նոյն թուին արհեստանոցի դասընթացն աւարտեցին հետևեալ 16 հոգին վարպետուհու կոչումով. Ապրէսեան Նունէ, Աւետիսեան Սիրանոյշ, Գաբրիէլեան Թագուհի, Գօզալեան Աստղիկ, Եղեան Աստղիկ, Եղիգարեան Սաթենիկ, Երզնկեան Թագուհի, Իշխանեան Վարդանոյշ, Իփակեան Շուշանիկ, Մինասեան Աննա, Ներսէսեան Շուշան, Սիմէօնեան Թամար, Տարախչեան Զաբել, Թոփչեան Վարդանոյշ, Խաչանեան Աստղիկ, Շարոյեան Շուշան։

Նոյն թուի կար ու ձևի արհեստանոցի չքաւոր աշակերտու-

հիների թւում կային 8 թոշակառու. յանուն Կ. Մութաֆեանի—Խաչատրեան Քալիա և Աթաբեգեան Աննա. յանուն Ն. Թամամշեանի-Գրիգորեան Նատալիա, յանուն Մակարեանի-Մելիքեան Նունէ և Գրիգորեան Մանեակ, յանուն Ն. Փրիդոնեանի-Եղեան Աստղիկ, յանուն Ս. Փոնդոյեանի-Ասլանեան Գայիանէ. յանուն Կ. Եւանգուլեանի-Ոստեկեան Աղնիւ։ Նախընթաց տարիների նման, բացի թոշակառուներից միւս չքաւոր աշակերտուհիները ևս հնար եղածին չափ նիւթական օգնութիւն են ստացել ընկերութիւնից, այն է հագուստ, կօշիկ, դեղորայք և իրանց պարապմունքին վերաբերեալ պիտոյքներ։

Արհեստանոցի աշակերտուհիներից շատերը ոչ միայն կարիք ունեն վերոյիշեալ օժանդակութեան, այլ նոյնիսկ նրանցից շատերը այնպիսի քայքայուած առողջութիւն ունեն, որ անհրաժեշտ է գոնէ ամառուայ 3 ամիսը աշխատել նրանց առողջութիւնը կարելոյն չափ կազդուրել։ Այս նպատակով վարչութեան անդամ տ. Ն. Ղամբարեանի նախաձեռնութեամբ 1908 թուի գարնանը մի ներկայացում տեղի ունեցաւ, որից ստացուած 234 ռուբլի արդիւնքով ամենաթոյլ առողջութիւն ունեցող աշակերտուհիներից 5 հոգի ուղարկուեցին ամարանոց։

Վարչութիւնս դիմեց Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան, խնդրելով որբանոցի որբերի հետ տանել ամարանոց և մեր 5 աշակերտուհիներին։ Խնդիրը յարգուեց և վերոյիշեալ 5 հոգին կազդուրուած սեպտեմբերին վերադարձան արհեստանոց։

Ինչ վերաբերում է նոր արհեստին, դա գուլբայագործութիւնն է, որ սկսուեց 1908 թուի սեպտեմբերից։ Այս արհեստի համար սկզբնական ծախք եղել է ընդամենը մօտաւորապէս 320 ռուբ. և ինչպէս ցոյց է տալիս 4—5 ամսուայ փորձը, գործը յաջողութիւն կունենայ։ Միայն առժամանակ այդ արհեստը շատերը միասին սովորել և աշխատել չեն կարող, որովհետև միայն երկու մեքենայ է, բայց երբ մեքենաների թիւը աւելանայ, թէ աշակերտուհիներ կարելի կլինի շատ ընդունել և թէ շատ բանուորուհիների կարելի կլինի աշխատանք տալ։

Ներկայումս Վարչութեան գործունէութիւնը գլխաւորապէս կենտրոնացած է այս երկու արհեստների շուրջը, սակայն մտադրութիւն կայ մօտ ապագայում ընդարձակել գործունէութիւնը

նորանոր արհեստանոցներ բաց անելով, որովհետև արհեստը ամենաէական միջոցներից մէկն է խեղճ դասակարգի տնտեսական ու բարոյական դրութիւնը բարելաւելու։

Այսպիսով Ընկերութեան միջոցների մեծագոյն մասը գործադրւում է արհեստանոցների վրայ։ Միայն մի չնչին գումար՝ այն է 115 ռ. հաշուետւութեան տարում բաժանուել է կողմնակի չքաւորների Ծննդեան և Զատկի տօների առթիւ։ Բայց այս տեսակի բարեգործութիւնը Վարչութիւնս միանգամայն աննպատակ, նոյնիսկ վնասակար գտնելով՝ իւր 1908 թ. մայիսի 6-ի № 8 վարչական նիստում որոշում կայացրեց վերացնել և այդ գումարը յատկացնել աւելի յարմար նպատակի։

Հաշուետւութեան տարում ընկերութիւնն ունեցել է 145 իսկական անդամներ տարեկան 6 ռ. վճարող և 4 անդամ միանուագ 150 ռուբ. վճարող. վերջիններն են տ. տ. Թամիրեան Սոֆիա, Գէորգեան Նունէ, Քամոյեան Եղ. և Շումախէր։

1908 թ. յօգուտ ընկերութեանը ստացուել են հետևեալ գումարները. եղբարք Միրզոյեանների նաւթարդիւնաբերական Ընկերութիւնից 500 ռ., տ. Ե. Ենիկոլոփեանից ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսնու 100 ռուբ., հանգուցեալ Կէկէլ Օհաննիսեանի թոռներից 25 ռ. ընդամենը 625 ռ.։

Ընկերութիւնը ստացել է նոյնպէս վարչութեան անդամ տ. Մ. Խատիսեանից նուէր մի դաշնամուր և պ. Զիլինգարեանից գուլբայագործութեան մեքենայ և բաւական թուով գլխարկներ աշակերտուհիների համար։ Բոլորին վարչութիւնս յայտնել է իւր խորին շնորհակալութիւնը։

Ընկերութեան օգտին հանգուցեալ տիկին Նադիրեանը կտակել է 2 դեսեատին հող և հանգուցեալ Ջոհրաբեանը 5000 ռուբլի, բայց այդ նուէրները դեռևս չեն ստացուած։

1908 վարչութիւնը մասնակցեց հայ թատրոնի 50 ամեայ յոբելեանին. կարդացուեց Ընկերութեան կողմից ուղերձ. պատգամաւորներ ընտրուած էին տ. տ. Հ. Մարտիրոսեան և Ե. Յարութիւնեան։

Հայուհեաց Բարեգ. Ընկ. միւս հաստատութիւնների հետ միասին մասնակցել է և Կոմս Վօրոնցով-Դաշկովի 50-ամեայ յոբելեանին. պատգամաւորներ ընտրուած էին տ. տ. Հ. Մարտիրոսեան և Շ. Օգանէզեան։

Մասնակցել է նոյնպէս Լէօի 25-ամեայ յօբելեանին և «Աղբիւր» մանկական ամսաթերթի 25-ամեայ յօբելեանին. երկու դէպքումն էլ կարդացուել են ուղերձներ և ուղարկուել պատգամաւորներ։

Վարչութիւնս դեկտեմբեր ամսի սկզբին դիմելով «Որբախնամ» և «Մեղու» Ընկերութեանց Վարչութեանց՝ առաջարկեց միասին շնորհաւորական հեռագիր ուղարկել Պետերբուրգ կանանց առաջին համառուսական համագումարին։ Այս առաջարկը ընդունուեց և հեռագիրն ուղարկուեց։

Վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը բժիշկ Ն. Խատիսեանին, որը շարունակում է ձրիապէս բժշկել արհեստանոցի աշակերտուհիներին։ Նոյնպէս բժշկուհի օր. Միրզոյեանին և բժիշկ Պարոնբէգեանին, որոնք ձրիապէս բժշկում են աչքացաւ ունեցող աշակերտուհիներին։

1908 թ. վարչութիւնս ունեցել է 17 հերթական նիստ և 12 խորհրդակցական։

ՁԵԿՈՒՅՑՈՒՄՆ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ 1907—908 ՈՒՍ. ՏԱՐՈՒԱՑՆ

1907 թ. սեպտեմբերին արհեստանոցում կային 128 աշակերտուհի, որոնք հետևեալ կերպով էին դասաւորուած։

I	բաժանմունքում.	30
II	«	28
III	«	27
IV	«	25
V	«	17

Տարուայ զանազան ժամանակներում արհեստանոցից հեռացան 14 աշակերտուհի հետևեալ պատճառներով.

Հիւանդացան	2
Տեղափոխուեց ուրիշ քաղաք	1
Ընտանեկան հանգամանք. ստիպ.	3
Վախճանուեցին	3
Ամուսնացան	5

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է բաժանել հետևեալ դասակարգերի.

Արհեստաւոր	57
Մանրավաճառ	28
Վաճառական	10
Գործակատար	8
Ծառայող	2
Բանւոր	11
Հոգևորական	3

Արհեստանոցի որբերի թիւն է 6, իսկ կիսաւորբերի, որոնք զուրկ են հօրից—36.

Արհեստանոցի աշակերտուհիները, բացի I նախապատրաստական բաժանմունքից՝ որտեղ պատուէրներ չեն ընդունուում, կարել են հետևեալ պատուէրները և վաստակել են.

II բաժ,	կարել է 200 կտոր կանանց և անկողնի սպիտակեղէն և վաստակել է	161 ռ. 80 կ.
III «	կարել է 15 բլուզ (սրանցից 6-ը զարդարուած հարթակարով) 2 շրջազգեստ, 218 նշանագիր հարթակ. 14 կտոր վերանորոգել և վաստակել է	239 ռ. 52 կ.
IV «	կարել է 37 ամբողջ զգեստ, 27 բլուզ, 27 կտոր վերանորոգել և վաստակել է	400 ռ. 90
V «	կարել է 35 ամբողջ զգեստ, 21 բլուզ, 10 կտոր վերանորոգել և վաստակել է	407 ռ.
	Ընդամենը	1209 ռ. 22 կ.

Բացի պատուէրներից, բոլոր բաժանմունքների աշակերտուհիները պատրաստել են նաև կանանց ու երեխայոց սպիտակեղէն, բլուզներ, օձիքներ և գոգնոցներ տարեկան սովորական վաճառքի համար, որ տեղի է ունենում ընդհանուր ժողովի օրը։ Այդ վաճառքից մնացել է զուտ արդիւնք 111 ռ. 50 կ., որն աւելացնելով վերոյիշեալ գումարին՝ ստացւում է ընդամենը—1320 ռ. 72 կ.

Այս գումարից ընթացաւարտ աշակերտուհիները ստացել են %—101 ռ. 72 կ. այսինքն իրանց աշխատանքի 25%.

Արհեստանոցի ուսուցչական խումբը, որ բաղկացած էր 10 վարժուհուց և մի աւագ վարժուհուց, ունեցել է մանկավարժական ժողովի 8 նիստ, երբեմն վարչութեան անդամների ներկայութեամբ, որտեղ արծարծուել ե վճռուել են մանկավարժական և մասնագիտական խնդիրներ արհեստանոցին վերաբերեալ։

Տարուայ ընթացքում իւրաքանչիւր աշակերտուհին բացակայել է միջին թւով 13 օր.

Տարուայ վերջն աշակերտուհիները հետևեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին.

Փոխադրուեցին հետևեալ բաժանմունք	86 հոգի
Մնացին նոյն բաժանմունքում	12 »
Աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական	16 »

Ընթացաւարտ աշակերտուհիներից մէկը գնաց գաւառ վարժուհու պաշտօնով, մէկը մտաւ քաղաքիս մի յայտնի արհեստանոց կատարելագործուելու կար ու ձևի արհեստի մէջ. մէկը պատրաստւում է, որ կարողանայ մտնել գիմնազիա. երկուսը ներկայումս սովորում են շքեղազարդ ձեռագործ Զինգերի արհեստանոցում, մէկը գրագիտութիւն է սովորեցնում երեխայոց իր տանը. իսկ մնացածները կարում են ընտանիքներում օրավարձով եղածին չափ կամ իրանց տանն են ընդունում պատուէրներ։

Զքաւոր աշակերտուհիների թիւն էր 28։ Սրանք ստացել են զգեստ, կօշիկ, կրկնակօշիկ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյք, դեղօրայք և երբեմն դրամական օգնութիւն։ Սրանց թւումն են և բարերարների անուան 7 թոշակառու աշակերտուհիք։

Պարապմունքն սկսուել է սեպտ. 1-ին և վերջացել յունիսի 10-ին։

Արհեստանոցի կառավարչուհի Ա. Կուզանեան

	1908 թ. նախահաշիվը		Իսկական եկամուտ.			
1908 թ. յունուարի 1-ին մնում էր.						
Պետական խնայող. գանձարանում			1991	56		
Ընկերութեան գանձարանում			845	06		
Տոկոսաբեր արժէթղթեր			23444	82		
Շարժական կայք			1446	10		
Ձեռագործի նիւթեր			389	67	28117	21
Ստացուած է.						
1. 144 անդամից	996	—	864	—		
2. Տոկոս ընկերութեան արժէթղթերից			741	—		
» յատուկ դրամագլխից	950	—	150	10		
» Պետական խնայող. գանձար.			30	97		
3. Կարուձևի արհեստանոցի պատուէրներից	1035	–	1033	95		
4. Պատուէրների համար գործադրած նիւթերից	—	—	395	11		
5. Վաճառքի համար պատրաստած ձեռագործների կարելավարձ	150	—	123	36		
6. Վաճառքի համար պատրաստած ձեռագործների գործադրած նիւթերից	—	—	148	20		
7. Նուիրատուութիւններ.						
Եղբ. Միրզոյեանների նաւթարդիւնաբերական ընկերութիւնից			500	—		
Տ. Եղ. Ենիկոլոբեանից հանգուցեալ ամուսնու յիշատակին	600	—	100	—		
Տ. Շ. Օգանէսեանից ի յիշատակ հանգուցեալ սկեսրոջ (պսակի փոխ.)			25	—		
8. Զբօսանքից և պարահանդէսից	3400	—	2749	78		
9. Թոյլ աշակերտուհիներին ամարանոց ուղարկելու համար տուած ներկայացումից	—	—	234	—		
10. Միանուագ անդամավճար տ. տ. Ս. Թամիրեանից, Ն. Գէորգեանից, Եղ. Քամոյեանից և տ. Շումախէրից	600	—	600	—		
Կոյս Աբամելիքեանից լրացուցիչ անդամավճար	—	—	50	—	7745	47
	7731	—				
					35862	68

	1908 թ. նախահաշիվը		Իսկական ծախս			
Ծախսուած է.						
1. Վարպետուհիներին, վարժուհիներին և ծառայողներին ռոճիկ	4782	—	4625	24		
2. Բնակարանի վարձ և ջրի փող	1400	—	1225	—		
3. Պատուէրների և դպրոց. ձեռագ. համար նիւթեր	60	—	659	95		
4. Տարազի ժամաթերթեր	27	—	30	95		
5. Զբաւոր աշակերտուհիներին զգեստ	170	—	186	93		
6. Վառելիք	140	—	163	65		
7. Մանր ծախս	60	—	62	90		
8. Զբաւոր աշակերտուհիներին նպաստ	—	—	60	15		
9. Դեղօրայք	30	—	31	23		
10. Դիւանական և տպագր. ծախքեր	100	—	104	65		
11. Տոմսակներ պահելու և ապագր.	40	—	24	10		
12. Կահ-կարասիքի վերանորոգումն	150	—	17	65		
13. Պատուէրներից բանուորուհիների օգտին հանած տոկոս	120	—	97	48		
14. Տօներին չքաւորներին նուիրատուութիւններ	100	—	115	50		
15. Երեխայոց զուարճութեան համար	—	—	50	42		
16. Աշակերտուհիներին ամարանոց ուղարկելը	—	—	233	—		
17. Անակնկալ ծախսեր	—	—	90	28		
18. Էկսպերտներին	—	—	10	—		
19. Կ. Եւանգուլեանի, Ն. Փրիդոնեանի, Գ. Մութաֆեանի, Մ. Մակարեանի, Ն. Թամամշեանի և Ս. Փոնդոյեանի անուան թոշակառուներին	152	—	152	—	7941	08
	7331	—				
1909 թ. յունուարին 1-ին մնում է.						
1. Պետական խնայող. գանձարանում			630	97		
2. Ընկերութեան գանձարանում			1309	39		
3. Տոկոսաբեր թղթերով			23444	82		
4. Շարժական կայք						
կար 1446 ր. 10 կ.			1567	26		
աւելացաւ 121 ր. 16 կ.						
5. Ձեռագործի նիւթեր						
կար 389 ր. 67 կ.			648	98	27601	42
աւելացաւ 259 ր. 31 կ.						
Ընդհանուր ժողովի վճռի համաձայն գուլպայանոցի բացման համար պահեստի գումարից յատկացրած 1000 ռուբլուց ծախսուած է					320	18
					35862	68

Ելևմուտից հաշուի համաձայն ընկերութեան 1908 թուի եկամուտը արտայայտուեց հետևեալ գումարով . .	7745	47
Ընկերութիւնը 1908 թուին ծախք է ունեցել .	7941	08
Ծախքից դուրս գալով մուտքը, ստացւում է դեֆիցիտ	195	61

Այսպիսով ընկերութեան 1909 թուի յունուարի 1-ի բալանսը արտայայտւում է հետևեալ թուերով.

40626-63

1909 թուի յունուարի 1-ի բալանսը

ԱԿՏԻՒ

Ընկերութեան գանձարանում . .	1309	39
Պետական խնայողական գանձարանում	630	97
Տոկոսաբեր արժէթղթեր. . .	23444	82
Շարժական կայք. . . .	1567	26
Ձեռագործի նիւթեր (Պիացորդ) .	648	98
ԲԱԼԱՆՍ	27601	42

ՊԱՍՍԻՒ

Անձեռնմխելի դրամագլուխ . .			11709	40
Յատուկ դրամագլուխ . .			4100	—
Պահեստի դրամագլուխ . .				
Առ 1-ն յունուարի 1908 թ. եղել է	8500	—		
Գուլպայանոցի համար ծախսուել է	320	18	8179	82
Ծախսի գումար.				
Առ 1-ն յունուարի 1909 թ. եղել է	3807	81		
1909 թուի դեֆիցիտը . .	195	61	3612	20
ԲԱԼԱՆՍ			27601	42

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ԳՈՒԼՊԱՅԱՆՈՑԻ ՀԱՇԻՒ

ՄՈՒՏՔ			ԵԼՔ		
Պատուէրներից ստացուած է . . .	90	25	Ռոճիկ վարժուհուն	60	—
			Մուտքից վարժուհու օգտին հանած տոկոս	5	—
1000 րուբլուց, որ յատկացրած էր գործին պահեստի գումարից վերցրած է .	320	18	Թել	116	14
			Մեքենայ	140	—
			Նուիրած մեքենայ նորոգելու . .	30	—
			Ցորմա, փալաս, հարթուկ, խոզանակ և այլն	11	—
			Մանր ծախսեր	48	29
	410	43		410	43

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վերստուգիչ Յանձնաժողովի զեկուցագիրը 1908 թ.

Հաշուետուութեան տարին Վերստուգիչ Յանձնաժողովը բաղկացած էր անդամներից՝ տ. տ. Հ. Աւթանդիլեան, Ն. Աւետեան և Ս. Բարխուդարեան, որոնք ստուգելով Ընկերութեան ելմուտից հաշիւը և համեմատելով փաստաթղթերի հետ՝ գտան, որ հաշիւները պահւում են կանոնաւոր և միանգամայն համապատասխանում են ներկայացրած փաստաթղթերին։

Նախագահ Հ. Աւթանդիլեան

Անդամ Աւետեան

Քարտուղար Ս. Բարխուդարեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ

1908 թուի

ՄՈՒՏՔ

1. Միանուագ վճարող անդամներից . . .	600	—
2. Իսկական անդամներից	1200	—
3. Պարահանդէսից, զբօսանքից և այլն . . .	3400	—
4. Նուիրատուութիւններ	600	—
5. Ընկերութեան գումարների տոկոս. . .	920	—
6. Պատուէրներից	1000	—
7. Ձեռագործների վաճառքից	152	68
	7872	68

ԵԼՔ

1. Վարժուհիներին և ծառայողներին ռոճիկ . .	5071	88
2. Բնակարանի վարձ	1700	—
3. Մանր ծախք	50	—
4. Վառելիք	200	—
5. Դեղօրայք	30	—
6. Տարազի ամսաթերթեր	30	—
7. Նախապատրաստական ձեռագ. համար նիւթեր .	60	—
8. Կահ-կարասիքի վերանորոգուն	25	—
9. Թոշակառուներին	155	80
10. Դիւանական և տպագրական ծախքեր . . .	100	—
11. Տոմսակներ պահելու և ապահովագր. . . .	40	—
12. Բանւորուհիների օգտին հանուած գումար . .	100	—
13. Տօնական զուարճութիւններ աշակերտուհիների համար	50	—
14. Զքաւոր աշակերտուհիներին զգեստ և նպաստ .	200	—
15. Անակնկալ ծախքեր	50	—
16. Էքսպերտներին (քննութեան ժամ.) . . .	10	—
	7872	68

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Ընկերութեան պատուաւոր անդամներ՝

պ. Ա. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան
տ. Հ. Մարտիրոսեան
տ. Ն. Ղամբարեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի՝ տ. Մ. Խատիսեան
Փոխ-ատենապետուհի՝ տ. Հ. Մարտիրոսեան

Անդամներ	Փոխ-անդամներ
տ. Մ. Ցուրինեան	տ. Ե. Վահրամեան
տ. Ն. Ղամբարեան	տ. Մ. Օգանէզեան
տ. Վ. Միլեան	տ. Ս. Քալանթարեան
տ. Ե. Ցարութիւնեան	օր. Ե. Ռոտինեան
տ. Մ. Ղարաջեան	
տ. Շ. Օգանէսեան	
տ. Մ. Լիսիցեան	

Վերաստուգիչ մասնաժողովի անդամներ	Փոխ-անդամներ
տ. Հ. Աւթանդիլեան	տ. Վ. Սպարապետեան
տ. Ս. Բարխուդարեան	տ. Մ. Կուսիկեան
տ. Ն. Աւետեան	

ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

Կոյս Աբամելիքեան
տ. Աւթանդիլեան Հեղինէ
տ. Ալիբէգեան Նունէ
տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբէկեան Մարիամ
† իշ. Արղութեան Երդայնաբազուկ Մարիամ Սոլ.
իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Յովհ.
տ. Ադիլխանեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Բաբայեան Սոֆիա (10)
տ. Բաղդասարեան Անահիտ
տ. Բաբայեան Վարվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վարվառէ
† իշ. Բէկթաբէկեան Մարիամ
տ. Գէորգեան Նունէ (նոր անդամ)
† Դոլուխանեան Եղիսաբէթ
տ. Եւանգուլեան Վարվառէ
տ. Եարալեան Կատարինէ
տ. † Էմինեան Աննա (20)
Կոյս Էնֆիաճեան Իսկուհի
տ. Թամիրեան Սոֆիա (Ն. անդամ)
տ. Թայիրեան Եղիսաբէթ
Կոյս Թայիրեան Հռիփսիմէ
տ. Թիւնիբէկեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղամբարեան Նունէ (30)
տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ճգնաւորեան Մարիամ
տ. Մանթաշեան Դարիա
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանոյշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
† տ. Մեհրաբեան Կատարինէ (40)
տ. Միլեան Վարվառէ
տ. Մուքթաֆեան Շողակաթ
տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
† տ. Շադինեան Քալի
տ. Շումախեր Եկատերինա (նոր անդամ)
տ. Զիթախեան Սոֆիա
տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Աննա
տ. Ռոտինեան Վարվառէ
տ. Սաֆարեան Նատալիա
տ. Սարուխանեան Ցուստինէ
տ. Վարդանեան Աննա (50)
տ. Վարդանեան Նունէ
տ. Տէր-Առաքելեան Եւգինէ
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Օհաննեսեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սաթենիկ
տ. Քամոյեան Եղիսաբէթ (նոր անդամ)

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա.

տ. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբովեան Նոյեմզար
տ. Աբովեան Նատալիա

տ. Աւետիսեան Ոսկի
տ. Աւետեան Նունէ
տ. Անանեան Վարվառէ
տ. Ամբարդանեան Թամար
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Աբիեան Մարգարիտ
տ. Աղայեան Նատալիա
տ. Անանեան Մարիամ
օր. Աղանեան Նուարդ
իշ. Արղութեան - Երկայնաբազուկ Սոֆիա
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Առստամեան Հեղինէ
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Աստուածատրեան Հեղինէ
տ. Աղամալեան Վիկտորիա

Բ

իշ. Բէհբութեան Նադեժդա
օր. Բաստամեան Վէրա
օր. Բայսողոլեան Շուշանիկ
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բաբանասեան Թամար
տ. Բէկզադեան Հեղինէ
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բարխուդարեան Սաթենիկ
իշ. Բէկթաբէկեան Աննա
տ. Բոզարջեան Մարիամ
տ. Բոզարջեանց Վարվառէ

Գ

տ. Գաբսոյեան Սոֆիա.
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ
օր. Գոզալեան Օլգա
տ. Գուլազեան Վարվառէ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գասպարեան Սարրա

Դ

օր. Դաւթեան Քալի
տ. Դոլուխանեան Նունէ։

Ե

տ. Երամեան Հռիփսիմէ
տ. Երէցփոխեան Սոֆիա

Է

տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
տ. Էնֆիաճեան Աննա

Թ

տ. Թադէոսեան Վարվառէ
տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Օսաննա

Ի

տ. Իւզբաշեան Մարիամ
տ. Իւզբաշեան Սոֆիա
տ. Իգիթխանեան Միրաքեան Նունէ
† տ. Իզմայիլեան Աննա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իւզբաշեան Նատալիա

Լ

տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ
տ. Լիսիցեան Հեղինէ
տ. Լիանոզեան Մարիամ

Խ

տ. Խաչատրեան Հռիփսիմէ

տ. Խաչատրեան Եղիսաբէթ
տ. Խաչատրեան Նունէ
տ. Խարազեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խունունց Գայիանէ

Կ

տ. Կաֆեան Նունէ
տ. Կուզանեան Աննա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կուկուջանեան Աննա

Հ

տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Աննա
օր. Հախվերդեան Մաննա
տ. Հայրումեան Սաթենիկ
տ. Հեջուբեան Եղիսաբէթ (ն. ա.)
օր. Հեջուբեան Եւգենիա (ն. ա.)

Ջ

տ. Ջամոյեան Եւգինէ
տ. Ջիթողցեան Շուշանիկ

Ղ

տ. Ղուլեան Վ. (նոր անդամ)
տ. Ղուլեան Աննա
օր. Ղուլիջանեան Կատարինէ
օ. Ղազարեան Կլաւդիա
տ. Ղալամքարեան Թամար
տ. Ղազազեան Սոֆիա
տ. Ղուլիջանեան Մարիամ
տ. Ղորղանեան Աննա
տ. Ղլտճեան Սաթենիկ

Մ

տ. Մանուէլեան (նոր անդամ)
տ. Մայիլեան Տատիանա (ն. ա.)
տ. Մնացականեան Փառանձեմ
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
օր. Մելիք-Ազարեան Սոֆիա
տ. Մելիք-Ղարագեոզեան Մարիամ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մուրադեան Հռիփսիմէ
տ. Մութաֆեան Լիւսի

Յ

տ. Յակոբեան Սոֆիա
տ. Յակոբեան Նունէ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Յարութիւնեան Մարիամ ն. ա.

Ն

տ. Նազարբէգեան Կատարինէ

Շ

տ. Շահնազարեան Նատալիա
տ. Շարբաբչեան Նունէ
տ. Շաթիրեան Իւղաբեր
տ. Շադինեան Վարվառէ
տ. Շահ-Պարոնեան Ռոզալիա
տ. Շխեանց Մարիամ ն. ա.

Ո

տ. Ումիկեան Աննա
տ. Ունուտցեան Կատարինէ

Չ

տ. Չէշմաճեան Ովսաննա

Ռ

տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Կատարինէ

Հ Հ Հ Հ
Հ Հ Հ Հ
Հ Հ Հ Հ

ՀՀ Ազգային գրադարան
NL0218848

42. 776
Арм
4-45 а